Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին ֆինանսական հաշվետվություն և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող հաստատություններում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» և «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումներ

«Բարի մամա» բարեգործական հասարակական կազմակերպություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ	8

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարի մամա» բարեգործական հասարակական կազմակերպության խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարի մամա» բարեգործական հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) կողմից իրականացված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռվա, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում իրականացված «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող հաստատություններում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» և «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումների շրջանակներում 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ինչպես նաև դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից ծանոթագրությունները (Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ):

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի դրամական միջոցների մնացորդը՝ 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև դրամական միջոցների մուտքերն ու վճարումները 2020թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ համաձայն դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի պահանջների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում. Հաշվապահական հաշվառման հիմունք

Մենք ուշադրություն ենք հրավիրում դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2020թ. փետրվարի 10-ին կնքված № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄԼ, № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄԳ, № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄՍ, № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄԼՓ, № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄԳՓ, և № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄՍՓ դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Ուստի այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող օգտագործվել մեկ այլ նպատակով: Մեր կարծիքը սույն հանգամանքով պայմանավորված չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն: Պատասխանատվության շրջանակները ներառում են նաև ղեկավարության որոշումը տվյալ պայմաններում Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառելի լինելու, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն ամբողջությամբ վերցրած զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի պատճառով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան

իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար .
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել Ծրագրի ֆինանսական հաշվետվության կից բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.
- գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

31 մայիսի 2021թ.

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվություն

ՀՀ դրամով

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		
	Փաստացի	Պայմանագրով նախատեսված	Տարբերություն
Կանխիկի մնացորդ 2020թ. փետրվարի 10-ի դրությամբ	-		
Ստացված ֆինանսավորում (ծանոթ. 3)	18,414,400		
Ընդամենը	**18,414,400**		
Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում	(3,126,600)	3,417,872	291,272
Բնաիրային օժանդակության տրամադրում և էներգետիկ ծառայությունների փոխհատուցում	(15,095,100)	15,097,975	2,875
Ընդամենը	**(18,221,700)**	**18,515,847**	**294,147**
Չօգտագործված գումարի հետ վերադարձ	(192,700)		
Կանխիկի մնացորդ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծանոթ. 4)	-		

Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը հաստատվել է 2021թ. մայիսի 31-ին:

Մարինե Ադուլյան

Նախագահ

Ծրագրի ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարի մամա» բարեգործական ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում հիմնված կազմակերպություն է: Կազմակերպությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմի 2015թ. մայիսի 11-ին 211.171.856839 գրանցման համարով:

Կազմակերպությունը ստեղծվել է հայ մայրիկների ջանքերով, որի հիմնական նպատակն է աջակցել հաշմանդամության պատճառով լքված և մանկատներում հայտնված հաշմանդամություն ունեցող երեխաներին: Կազմակերպությունն ունի մոտ 8,000 անդամ:

Կազմակերպության առաքելությունը երեխաներին տուն և ընտանիք պարգևելն է:

Կազմակերպության շահառուներն են.

- Հղիության և հետծննդաբերական պաթոլոգիաների առումով ռիսկային խմբերին պատկանող հղիկամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Միայնակ և/կամ սոցիալապես անապահով, անաշխատունակ հղի կամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Առողջական խնդիրների և/կամ հաշմանդամության պատճառով կենսաբանական ծնողի կողմից լքված 0-6 տարեկան երեխաները,
- Մանկատան սաները և մանկատնից դուրս եկած 18 տարին լրացած և խնամակալ չունեցող երիտասարդները,
- Սոցիալապես անապահով ընտանիքները,
- Նախադպրոցական հաստատությունները և ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող հանրակրթական դպրոցները:

Ծրագրի շրջանակներում Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումները ներառում են.

- ՀՀ Լոռու մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 35 երեխայի և նրանց ընտանիքների գնահատված կարիքներին համապատասխան աջակցության տրամադրելումն է, նրանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ կանխարգելելը և բնաիրային աջակցության տրամադրումը: Երեխաների խնամքի շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքներին տրամադրվում է բնաիրային օժանդակության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 20 երեխայի և նրանց ընտանիքների գնահատված կարիքներին համապատասխան աջակցության տրամադրելումն է, նրանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ կանխարգելելը և բնաիրային աջակցության տրամադրումը: Երեխաների խնամքի շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքներին տրամադրվում է բնաիրային օժանդակության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:
- ՀՀ Սյունիքի մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 19 երեխայի և նրանց ընտանիքների գնահատված կարիքներին համապատասխան աջակցության տրամադրելումն է, նրանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ կանխարգելելը և բնաիրային աջակցության տրամադրումը: Երեխաների

խնամքի շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքներին տրամադրվում է բնաիրային օժանդակության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

Կազմակերպության՝ Ծրագրի իրականացման մեջ ներգրավված աշխատակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 3 մարդ:

Կազմակերպության գործունեության հասցեն է Այգեգործական 6-րդ թաղամաս 1/2, գյուղ Ջրվեժ, ՀՀ:

2 Էական հաշվապահական քաղաքականություն

2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն: Հաշվապահական հաշվառման այս հիմունքի շրջանակներում ֆինանսավորումը ճանաչվում է ստացման պահին, իսկ ծախսերը վճարման պահին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար:

3 Ստացված ֆինանսավորում

2020թ, փետրվարի 10-ին կնքված № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄԼ, № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄԳ, № ԴՏՊ-1141-11002/20-ԲՄՍ, № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄԼՓ, № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄԳՓ, և № ԴՏՊ-1141-12002/20-ԲՄՍՓ դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռվա, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում իրականացված «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող հաստատություններում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» միջոցառումների իրականացման համար հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը ստացել է 3,126,600 դրամի ֆինանսավորում, իսկ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումների իրականացման համար՝ 15,287,800 դրամի ֆինանսավորում:

4 Կանխիկի մնացորդ

«Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումների իրականացման համար ստացված ֆինանսավորման մասով չօգտագործված 192,700 դրամի մնացորդը 2020թ. դեկտեմբերի 14-ին հետ է վերադարձվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այսպիսով՝ հաշվետվու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում ստացված ֆինանսավորման գումարն ամբողջությամբ ծախսվել է: